



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«23» Օգոստոս 2022թ.

### ՀՐԱՄԱՆ N 413-26

«ԶԱՐԼԻ ԷՅՐԼԱՅՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ («ՍԱՅՓՐՈՒՄ ԷՅՐՎԵՅՍ») ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Զարլի Էյրլայնս» ՍՊ ընկերության («Սայփրուս Էյրվեյս») 2022 թվականի օգոստոսի 1-ի գրությունը և 2022 թվականի օգոստոսի 11-ի և 17-ի հայտերը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Զարլի Էյրլայնս» ՍՊ ընկերությանը («Սայփրուս Էյրվեյս») (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2022 թվականի օգոստոսի 30-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2023 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) անառային և ձմեռային ժամանակահատվածներում՝ 2022 թվականի

օգոստոսի 3-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 28-ը և 2022 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2023 թվականի մարտի 24՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Լաոնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լաոնակա/LCLK/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերության կողմից դիմումի ներկայացման օրվա՝ 2022 օգոստոսի 1-ի դրությամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին՝ Երևան/UDYZ/-Լաոնակա/LCLK/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Սահմանել, որ սույն հրամանի երկրորդ կետով նշված արտոնության տրամադրման սկիզբը 2022 թվականի օգոստոսի 24-ն է՝ ամիսների նվազման կարգով:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

8/23/2022

X 

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ


Signed by: ASATRYAN SIMON 3811700103

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 126/2022  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ  
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 126/2022  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF  
ARMENIA

Օդանավաչափագործողը Aircraft Operator	«Չարլի Էյրլայնս» ՍՊԸ («Սայփրուս Էյրվեյս») «Charlie Airlines» LTD ("Cyprus Airways")
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319, A320
Հաճախականությունը Frequency	30/08/2022 – 25/10/2022 - շաբաթական 1 չվերթ 30/08/2022 – 25/10/2022 - 1 flight per week 02/11/2022 – 24/03/2023 - շաբաթական 2 չվերթ 02/11/2022 – 24/03/2023 – 2 flights per week
Երթուղին Air route	Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	30/08/2022 մինչև 24/03/2023 30/08/2022 till 24/03/2023

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ  
ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ  
ACTING CHAIR OF THE  
CIVIL AVIATION COMMITTEE  
SIMON ASATRYAN



23.08.2022

(տարու ամսաթիվը)  
(date of issue)